ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ
2019-2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2019-2020 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 90 մարդ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 70 մարդ /որից 45-ը կին/,

Պրոֆեսոր - 1

Գիտությունների դոկտոր - 3

Դոցենտ -9, որից 5-ը կին:

Գիտությունների թեկնածու- 36, որից 20-ը կին:

4 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 16, որից 12-ը կին:

Ուսումնաօժանդակ կազմը - 2, որից 2-ը կին:

Գիտա-բժշկական ուսումնական կենտրոն-16, որից 12-ը կին:

Տնտեսական մասը-6, որից 3-ը կին:

2019-2020 ուստարվա ընթացքում կնքվել է 76 աշխատանքային պայմանագիր:

Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 20-ը /պայմանագրի լուծարմամբ, որից 5-ը հիմնական աշխատող, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 57:

- 2019-2020 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի հրաման:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր,
  - ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր,
  - ԳԲՈՒԿ-ի աշխատակիցներ՝ 26 աշխատանքային օր,
  - վարչական , ուսումնաօժանդակ և տնտեսական մասին՝ 24 աշխատանքային օր:

- Հաստիքացուցակը կազմվել է 31.08.2019թ-ին, 08.01.2020թ-ին, և հաստատվել ռեկտորատի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 13 թոշակառուներ:

  Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

  Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

  2019-2020 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 476-ը:
- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:

  Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:

  Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 131 տեղեկանք /աշխատողներին՝ 41, ուսանողներին՝ 90/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար: